«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Քրիստինե Սահակյան
ՀԱԱՀ ԱՊՀ Էկոնոմիկայի ամբիոնի դասախոս, տ.գ.թ.
sahakyangristine@mail.ru

ԼՂՀ տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը՝ գյուղատնտեսությունը 2007-2011թթ. ապահովել է երկրի համախառն ներքին արդյունքի 13.4 տոկոսը:[1] Այդ ցուցանիշը գրեթե չի փոխվել հետագա տարիների ընթացքում՝ 2016թ. կազմելով 13.2%:[2] 1995 թվականից սկսած, ելնելով Արցախի տնտե-սության կայունացման գործում գյուղատնտեսության կարևորությունից, ընտրվեց հողի և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, սպասարկող ենթակառույցների, գյուղմթերքներ իրացնող ու վերամշակող կազմակերպությունների մասնավորեցման քաղաքականությունը: Դրա արդյունքում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատ տնտեսական համակարգ, որը ներառում է շուրջ 18375 գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսական սպասարկման, գյուղմթերքների իրացման և վերամշակման մասնավոր ընկերություններ:[3]

Ներկայումս ԼՂՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի բացարձակ գերակշիռ մասը (ավելի քան 76 տոկոսը), արտադրվում է բնակչության տնտեսությունների կողմից:[4]

Գյուղատնտեսության բնագավառում արտադրության արդյունավետ կազմակերպմանը դեռևս լուրջ խոչընդոտ են նաև գյուղացիական տնտեսությունների համեմատաբար փոքր չափերը և այս ոլորտում տնտեսվարման տարբեր ձևերի ներդրման դանդաղ տեմպերը: Ներկայումս միջին հաշվով մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում 31.0 հա գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում՝ 6.9 հա վարելահող, ինչը չի կարող արդյունավետ տնտեսավարման և ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման համար պատշաճ հնարավորություն ստեղծել: Միևնույն ժամանակ, ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն, վարելահողերի շուրջ 42.0 տոկոսը[5] նպատակային նշանա-կությամբ չի օգտագործվում:

Գյուղատնտեսության ինտենսիվացման դեռևս ցածր մակարդակի, սերմնաբուծության համակարգի անկատարության, պարարտանյութերի և թունաքիմիկատների անբավարար և ոչ ճիշտ օգտագործման, մշակության ագրոտեխնիկական կանոնների խախտման պատճառով դեռևս ցածր է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը: Հիմնականում ցանքատարածությունների ավելացման հաշվին մեծացել է հացահատիկի և բանջարեղենի համախառն բերքը: Ինտենսիվացման առումով որոշակի դրական տեղաշարժեր կան նաև խաղողագործության բնագավառում:

---

[1] ԼՂՀ 2014-2016թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 125:
[2] ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվար-դեկտեմբերին, էջ 7:
[3] ԼՂՀ գյուղատնտեսության զարգացման ռազմավարություն, ԼՂՀ կառավարության որոշում, 2008թ., էջ-5:
[4] Աղբյուրը՝ ԼՂՀ գյուղատնտեսությունը, 2016թ., էջ-2:
[5] Աղբյուրը՝ ԼՂՀ գյուղատնտեսությունը, 2016թ. էջ 6, ԼՂՀ թվերով, 2016թ էջ 53:

Գյուղատնտեսության տեխնիկական ապահովման բնագավառում ևս լուրջ խնդիրներ կան, քանի որ խորհրդային ժամանակից մնացած գյուղտեխնիկայի և սարքավորումների շուրջ 97 տոկոսի շահագործման ժամկետը լրացել է, որի պատճառով ցածր են սարքինության մակարդակը և արտադրողականությունը, ինչից ելնելով էլ՝ բարձր են շահագործման ծախսերը և ծառայությունների սակագները,,:[1] Ստեղծված իրավիճակը շտկելու և գյուղտեխնիկայի պարկի թարմացման համար Արցախում կարևոր քայլ էր մեքենատրակտորային կայանների ստեղծումը:

Այսօր, թեպետ, պետությունը իրականացնում է տեխնիկական հագեցում, սակայն այդ տեխնիկայից օգտվում են հիմնականում խոշոր տնտեսությունները, իսկ փոքր գյուղացիական տնտեսությունները հաճախ հնարավորություն չունեն օգտագործել այդ տեխնիկան իրենց փոքր հողակտորների վրա: Գյուղացիներն այդ տեխնիկայի սեփականատերը չեն հանդիսանում և ի վիճակի չեն կազմակերպել աշխատանքների գրաֆիկը, քանի որ նմանատիպ բոլոր հարցերը վճռում են նորաստեղծ մեքենատրակտորային կայանները: Արդյունքում փոքր գյուղացիական տնտեսություններին տեխնիկան հասնում է վերջին հերթին:

Նշված հիմնախնդիրներին ավելանում են նաև գյուղմթերքների իրացման շուկայի ձևավորման դժվարությունները, որոնք մի կողմից պայմանավորված են տեղական շուկայում դեռևս ցածր վճարունակ պահանջարկով, մյուս կողմից գյուղատնտեսական մթերքներ գնող-իրացնող ենթակառուցվածքների բացակայությամբ և արտահանման դժվարություններով:

Գյուղատնտեսության բնագավառում բացակայում է բնական աղետների հետևանքով կորուստների ապահովագրումը, և դեռևս նկատելի չեն շոշափելի տեղաշարժերը բնական աղետների կանխարգելման կառույցների կազմավորման ուղղությամբ:

ԼՂՀ-ում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության բացակայությունը բացասական հետևանքներ է ունենում ոլորտի զարգացման վրա: Տարերային աղետների, համաճարակների, երաշտի և այլ դժբախտ պատահարների հետևանքով գյուղացին կորցնում է բերքը, անասնագլխաքանակը կրճատվում է կամ շարքից դուրս են գալիս հիմնական միջոցները, իսկ ապահովագրության բացակայության պայմաններում գյուղացին զրկված է վնասի փոխհատուցում ստանալու հնարավորությունից: ԼՂՀ տարածքները համարվում են գյուղատնտեսական արտադրության վարման բարձր ռիսկայնության գոտի: Տարերային աղետները (տևական երաշտ և սակավաջրություն, կարկտահարություն, սելավներ և այլն) հանրապետության տարբեր գոտիներում տեղի են ունենում յուրաքանչյուր տարի, որոնց հետևանքով լրիվ կամ մասնակի ոչնչանում է բերքի մինչև 20-25 տոկոսը: Ուստի, բերքի և գյուղատնտեսական կենդանիների ապահովագրության զարգացումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն:[2]

Այս ամենը, իրենց հերթին բացասաբար են ազդում գյուղատնտեսության արդյունավետության և ճյուղային կառուցվածքի զարգացման վրա: Վերը նշված պրոբլեմներն ու խնդիրներն ուսումնասիրելով փորձենք առաջ քաշել ապահովագրության մի ուղղություն, որը կնպաստի ԼՂՀ գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը և ճյուղի զարգացմանը:

---

[1] ԼՂՀ գյուղատնտեսության զարգացման ռազմավարություն, ԼՂՀ կառավարության որոշում, 2008թ., էջ-6;7:

[2] Ապահովագրական գործ, Ուսումնական ձեռնարկ; Կ.Կիրակոսյան. Երևան 2003թ., 240 էջ; 151-էջ:

Ինչպես արդեն նշել ենք, ԼՂՀ զերծ չէ բնական և տարերային աղետներից, ինչն առաջին հերթին կտրուկ բարձրացնում է գյուղատնտեսության զարգացման ռիսկայնությունը: Իրավիճակը բարդանում է ոչ միայն նրանով, որ տվյալ տարում արձանագրվում է բերքի մեծ կորուստ, այլև նրանով, որ դա իր բացասական ազդեցությունն է ունենում արտադրողի հետագա բնականոն տնտեսական գործունեության զարգացման վրա: Այս տեսանկյունից խիստ կարևորվում է գյուղատնտեսության, և հատկապես բուսաբուծության ապահովագրման համակարգի ներդրումն ու զարգացումը:

Այն ենթադրում է.

- պետության ակտիվ աջակցություն,
- պետության մասնակցության տարբեր ձևեր՝ ապահովագրական մուտքերի սուբսիդավորում կամ վնասի մասի փոխհատուցում,
- համակարգային մոտեցում ապահովագրության իրականացմանը, որն իր հերթին ենթադրում է հստակ նորմատիվ-իրավական հիմքի առկայություն, որը հաշվի կառնի գյուղմթերք արտադրողների, պետության և ապահովագրական կազմակերպության շահերը, պետական կառույցի կողմից կոորդինացնողի դերի իրականացումը, ֆինանսական ռեսուրսների միավորումը՝ հատուկ ֆոնդի ստեղծման կամ պետական երաշխիքով ապահովագրական գործառնությունների անցկացման միջոցով,
- ծրագրերի իրականացման հստակ չափանիշներ, որոնցում առկա է պետության մասնակցությունը,
- պետության մասնակցությամբ, ապահովագրության մարմնի կողմից բերքի միայն որոշակի մասի ապահովագրում, այսինքն գյուղմթերք արտադրողներին անհրաժեշտ նվազագույն աջակցության ապահովումը:

ԼՂՀ տնտեսավարողները, ցածր վճարունակությամբ պայմանավորված, նախաձեռնություն չեն ցուցաբերում ապահովագրում իրականացնելու համար: Դրա հետ մեկտեղ, բարձր ռիսկերի հետ կապված, գյուղատնտեսությունում ապահովագրություն չեն ձգտում իրականացնել նաև գործող ապահովագրական կառույցները: Գյուղատնտեսության ոլորտում գործուն ապահովագրական համակարգի ձևավորմանը խոչընդոտում են մի շարք գործոններ.

- ճյուղում ապահովագրական գործընթացը կանոնակարգող օրենսդրական դաշտի անկատարությունը,
- ոլորտի բարձր ռիսկայնությունը,
- գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող այլ տնտեսավարող սուբյեկտների անվստահությունը ապահովագրական գործի նկատմամբ,
- գյուղացիական տնտեսությունների կողմից հնարավոր կորուստների թերագնահատումը,
- գյուղացիների հոգեբանության իներցիան: Նրանց մոտ դեռևս որոշակիորեն առկա է այն մտայնությունը, թե բնական աղետի դեպքում պետությունը կփոխհատուցի իրենց վնասները, իսկ պետությունն այդպիսի միջոցներ չունի, ապահովագրական վճարների վճարման գործում,
- գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակությունը,
- տնտեսության տարբեր ոլորտներում ապահովագրություն իրականացնող կառույցների նկատմամբ տարբերակված պայմանների (հարկային և այլ) բացակայությունը,
- հանրապետությունում գործող ապահովագրական կառույցների գործունեության փորձի պակասը գյուղատնտեսության բնագավառում:

Խնդրի իրագործման համար առաջին հերթին անհրաժեշտ ենք համարում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրման հայեցակարգի և դրա հիման վրա «Գյուղատնտեսության ապահովագրության մասին» օրենքի մշակումը: Ի դեպ նշենք, որ ապահովագրական ընկերությունների լիցենզիաներ տրամադրողը և համակարգողը համարվում է ՀՀ կենտրոնական բանկը: Հիշյալ փաստաթղթերով, մեր կարծիքով, հստակ պետք է սահմանվեն գյուղատնտեսության ապահովագրման հետևյալ հիմնական դրույթները.

1. Պետության մասնակցությունը ապահովագրության մեջ. պետք է նախատեսվի պետական միջոցների օգտագործման հնարավորությունը թե ապահովագրական մուտքերի սուբսիդավորման և թե գյուղմթերքներ արտադրողների վնասների փոխհատուցման համար միայն այն դեպքում, երբ նրանց ունեցվածքն ապահովագրված է, ինչպես նաև այն դեպքերում, երբ վնասները կրում են բացառիկ բնույթ: Վնասները, որոնք առաջացել են զուտ անբարենպաստ եղանակային պայմանների արդյունքում, պետք է ծածկվեն ապահովագրական ընկերությունների կողմից:

2. Անհրաժեշտ է հստակ որոշել գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրման այն տեսակները, որոնք երաշխավորված կլինեն պետական աջակցությամբ, ինչպես նաև գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության տեղը ապահովագրության տեսակների դասակարգման ընդհանուր համակարգում:

3. Հարկ է ամրագրել ապահովագրության կազմակերպության երկու մոդել.

➢ գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրումն առևտրային ապահովագրական կազմակերպությունների կողմից: Այստեղ կարևոր է օրենսդրորեն սահմանել ապահովագրական խմբերում դրանց միավորման սկզբունքները, նպատակներն ու խնդիրները, ապահովագրական խմբի մասնակիցների նկատմամբ պահանջները,

➢ գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրումը գյուղական համայնքում փոխադարձ ապահովագրության ասոցիացիաների ստեղծման միջոցով: Նպատակահարմար է նաև որոշել դրանց աշխատանքի հիմնական չափորոշիչները:

4. Ապահովագրության պայմանները պետք է սահմանվեն ըստ հիմնական տեսակների.

• ապահովագրական ռիսկերի տիպային ցանկը՝ դրանց չափանիշների նկարագրությամբ,

▪ ապահովագրական արժեքի և գումարի սահմանման կարգը,

▪ ապահովագրական երաշխիքային նորմերը,

▪ ապահովագրական պայմանագրերի կնքման ժամկետները և այլն:

5. Ապահովագրության համար բանկային վարկի ստացման արտոնյալ պայմանները,

6. Պետական աջակցության իրականացման կարգը, պայմանները: Բյուջեից ֆինանսավորման չափը որոշելու համար պետք է մշակել ապահովագրական շուկայի տարողունակությունը բնութագրող ցուցանիշների ցանկը: Անհրաժեշտ է նաև ամրագրել բյուջետային միջոցների հատկացման տարբերակները (արդեն վճարված ապահովագրական մուտքերի փոխհատուցման կամ դոտացիաների տեսքով), ապահովագրական մուտքերում պետության մասնակցության չափը, բյուջետային միջոցների հատկացման ժամկետները և այլն:

7. Տարածաշրջանային բյուջեների, ապահովագրական ռեզերվների միջոցների օգտագործման կարգը՝ տարերային աղետների հասցրած վնասները փոխհատուցելու համար:

8. Ապահովագրական նոր ապրանքների մշակման հեռանկարները,

9. Մասնագետների պատրաստումն ու տեղեկատվական աշխատանքը:

Մշակվող հայեցակարգի առավել արդիական հարցերից պետք է լինեն արդյունավետ սակագնային քաղաքականության սահմանումը, գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրման ամբողջական համակարգի ստեղծումը՝ անկախ ապահովագրության կազմակերպչական մոդելներից, ինչպես նաև պետական կենտրոնացված ռեզերվների ձևավորման, ապահովագրական մոնիթորինգի իրականացման հարցերը: Մեծ մասամբ դրանք վերաբերում են գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրմանը, քանի որ ապահովագրության այս տեսակն առավել ծախսատար է՝ ապահովագրության արժեքի, և հետևաբարար, մուտքերի սուբսիդավորման ծավալների տեսանկյունից, տարերային է՝ շատ բարձր ապահովագրական արժեքի և ապահովագրական դեպքերի ի հայտ գալու հավանականության տեսանկյունից, ինչն իր հերթին առաջացնում է ապահովագրության արդյունավետ համակարգի մշակման և կենտրոնացված ռեզերվների ստեղծման անհրաժեշտությունը:

Մշակաբույսերի ապահովագրումը բազմաթիվ ռիսկերից թանկ է մի շարք պատճառներով.

- Վարչական ծախսեր.

✓ընկերությունները ստիպված են հաճախորդների մոնիթորինգ իրականացնել՝ անհրաժեշտ բոլոր տեխնոլոգիական գործառնությունների իրականացման նկատմամբ վերահսկողություն ապահովելու համար:

✓Տեղեկատվության անհամաչափության խնդիրների լուծման համար մոնիթորինգի ու ակտուարային ծառայությունների ծախսեր (երբ արտադրողն ավելի լավ է տեղեկացված իր ռիսկերի ու մշակաբույսերի վիճակի մասին, քան ապահովագրողը):

- Օրենսդրական նորմեր, որոնք սահմանափակում են նոր ապրանքների ներառման հնարավորությունները,
- կապիտալի/պահուստների նկատմամբ բարձր պահանջներ այնպիսի համակարգային ռիսկերի պատճառով, ինչպիսին է երաշտը,
- ռիսկերի գնահատման խնդիրներ, որոնք հազվադեպ են պատահում, սակայն ունեն տարերային բնութագրիչներ,
- վնասի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման վրա կառավարչական որոշումների ազդեցությունը,
- ոչ հարմար տարածքներում կամ անբարենպաստ կլիմայական գոտիներում գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման դեպքում:

Այն երկրներում, որտեղ ապահովագրման համակրգը նոր է սկսում զարգանալ, ապահովագրական ընկերությունները սովորաբար չեն կարողանում որակյալ կերպով ապահովագրել ռիսկերը, սակայն առաջարկված ապահովագրության մոդելը կարծում ենք կնպաստի ԼՂՀ գյուղատնտեսության զարգացմանը:

Քրիստինե Սահակյան

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Բանալի բառեր՝ *գյուղատնտեսություն, զարգացում, ապահովագրություն, ներդրում, պետություն, աջակցություն*

ԼՂՀ գյուղատնտեսության բնագավառում բացակայում է բնական աղետների հետևանքով կորուստների ապահովագրումը, և դեռևս նկատելի չեն շոշափելի տեղաշարժերը բնական աղետների կանխարգելման, կառույցների կազմավորման, պետական աջակցության ուղղությամբ:

Գյուղատնտեսության պրոբլեմներն ու խնդիրներն ուսումնասիրելով փորձենք առաջ քաշել ապահովագրության մի ուղղություն, որը կնպաստի ԼՂՀ գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը և ճյուղի զարգացմանը:
Խնդրի իրագործման համար առաջին հերթին անհրաժեշտ ենք համարում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրման հայեցակարգի և դրա հիման վրա «Գյուղատնտեսության ապահովագրության մասին» օրենքի մշակումը: Ինչով էլ պետք է հստակ սահմանվեն գյուղատնտեսության ապահովագրման հիմնական դրույթները:

Кристине Саакян

ВНЕДРЕНИЕ СТРАХОВОЙ СИСТЕМЫ КАК ПРЕДПОСЫЛКА РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА НКР

Ключевые слова: *сельское хозяйство, развитие, страхование, внедрение, государство, поддержка*

В сфере сельского хозяйства НКР отсутствует страхование убытков вследсвие стихийных бедствий, и еще не видны ощутимые сдвиги по предотвращению стихийных бедствий, формированию организаций и государственной поддержки.

Изучая проблемы и задачи сельского хозяйства попытаемся продвигать одно направление, который будет способствовать повышению эффективности сельского хозяйства НКР и развития отрасли.

Для реализации этой задачи прежде всего считаем необходимым разработать концепцию страхования сельскохозяйственных рисков и на основе этого разработать закон “О сельскохозяйственном страховании”, чем и должны быть четко определены основные положения сельскохозяйственного страхования.

Kristine Sahakyan

INSURANCE SYSTEM INSERTION AS A PRECONDITION OF NKR AGRICULTURE DEVELOPMENT.

Key words: *agriculture, development, insurance, insertion, state, support*

In the field of agriculture of NKR there is no insurance of losses due to natural disasters, and there are still not visible changes in the prevention of natural disasters, the formation of organizations and state support.

Studying the problems and tasks of agriculture, we will try to promote one direction that will contribute to improving the efficiency of the NKR agriculture and the development of the sphere.

To realize this task, first of all, we consider it necessary to develop the concept of insurance of agricultural risks and, on the basis of this, to develop the law "On agricultural insurance", which should clearly define the main provisions of agricultural insurance.